

15. Արտակարգ իրավիճակներ

2003թ. հանրապետության տարածքում գրանցվել է 2389 արտակարգ իրավիճակի դեպք: Աղետների հետևանքով տուժել է 2079 մարդ, նրանցից 282-ը զոհվել է, 1737-ը՝ վիրավորվել, 60-ը՝ ժամանակավորապես տեղահանվել:

Գրանցված արտակարգ իրավիճակների դեպքերի 17.2%-ը բաժին է ընկել տարերային աղետներին, որոնց հետևանքով տուժել է 225 մարդ (2-ը՝ զոհ, 163-ը՝ վիրավոր, 60-ը՝ ժամանակավորապես տարահանված): Տարերային աղետների հետևանքով պատճառված վնասի գումարը կազմել է 806.5 մլն. դրամ:

Տարերային աղետների քանակը և դրանցից տուժածների թվաքանակը, 2003թ.

	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ			
			ընդամենը	զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
Տարերային աղետներ, ընդամենը	412	806546	225	2	163	60
այդ թվում						
ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, պտտահողմ, փոշեփոթորիկ	14	101460	-	-	-	-
ամպրոպ, կայծակ	2	6000	1	1	-	-
կարկուտ	17	462876	-	-	-	-
տեղատարափ անձրև	8	300	-	-	-	-
սողանք	14	3400	1	1	-	-
սելավ	16	66880	-	-	-	-
ծյան առատ տեղումներ, բուք, ձյունահողմ	6	-	-	-	-	-
ծնահյուսք	2	8100	-	-	-	-
անտառային հրդեհ	9	-	-	-	-	-
ցրտահարություն վեգետացիոն շրջանում	2	3750	-	-	-	-
զետերի վարարումներ և ջրհեղեղ	26	152550	60	-	-	60
փլվածք	5	-	-	-	-	-
քարաթափվածք	12	1205	-	-	-	-
համաճարակ բնակչության շրջանում էպիզոտիա (անասնաճարակ)	6	-	163	-	163	-
էրկրաշարժ	8	-	-	-	-	-
հացահատիկի դաշտերի և տարածքների հրդեհներ	126	25	-	-	-	-
ջրի մակարդակի բարձրացում	41	-	-	-	-	-
ջրի մակարդակի իջեցում	76	-	-	-	-	-
տարերային այլ աղետներ	21	-	-	-	-	-

Տարերային աղետների քանակն ու տուժածների թվաքանակն ըստ մարզերի, 2003թ.

	Գրանցված դեպքերի քանակը, ընդամենը	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ			
			ընդամենը	զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
ք.երևան	161	-	-	-	-	-
Արագածոտն	37	452266	3	-	3	-
Արարատ	17	146600	-	-	-	-
Արմավիր	9	-	-	-	-	-

Շրջակա միջավայրը և բնական պաշարները 2003թ.

	Գրանցված դեպքերի քանակը, ընդամենը	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ			
			ընդամենը	նրանցից		
				զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
Գեղարքունիք	23	30200	-	-	-	-
Լոռի	19	705	35	-	35	-
Կոտայք	28	4050	113	-	113	-
Շիրակ	33	15558	61	1	-	60
Սյունիք	44	53350	13	1	12	-
Վայոց ձոր	23	103817	-	-	-	-
Տավուշ	18	-	-	-	-	-
Ընդամենը ՀՀ	412	806546	225	2	163	60

Արտակարգ իրավիճակների դեպքերի 82.8%-ը բաժին է ընկել տեխնածին աղետներին, որոնց հետևանքով տուժել է 1854 մարդ (280-ը՝ զոհ, 1574-ը՝ վիրավոր): Տեխնածին աղետների հետևանքով պատճառված վնասի գումարը կազմել է 171.6 մլն. դրամ:

Տեխնածին աղետների քանակը և դրանցից տուժածների թվաքանակը, 2003թ.

	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ		
			ընդամենը	նրանցից	
				զոհվել են	վիրավորվել են
Տեխնածին աղետներ, ընդամենը այդ թվում	1977	171589	1854	280	1574
մարդատար զնացքների և մետրոպոլիտենի զնացքների բոլոր վթարները	1	-	-	-	-
վթարներ մայրուղային խողովակաշարերում	5	-	-	-	-
վթարներ (աղետներ) ավտոճանապարհներին, որոնք ուղեկցվում են 5 և ավելի մարդկանց զոհերով կամ մայրուղիներում երթևեկության տևական խաթարումով	1	-	6	6	-
օդաղետ	1	-	1	1	-
հրդեհ (պայթյուն) արդյունաբերական օբյեկտներում	35	-	1	1	-
հրդեհ (պայթյուն) տրանսպորտում	82	3307	5	-	5
հրդեհ (պայթյուն) սոցիալ-կենցաղային, մշակութային օբյեկտներում	93	356	3	1	2
հրդեհ (պայթյուն) հանքահորերում, ստորգետնյա անցումներում և մետրոպոլիտենում	1	-	-	-	-
տրանսպորտային ուղիների էլեմենտների փլուզում (վթարային իրավիճակ)	5	151305	-	-	-
արտադրական շենքերի և շինությունների փլուզում	1	-	-	-	-
բնակելի, սոցիալ-կենցաղային նշանակության շենքերի և շինությունների փլուզում	25	-	12	7	5
վթար էլեկտրաէներգետիկ համակարգերում, որն ուղեկցվում է հիմնական սպառողներին և ընդարձակ տարածքներ 6 ժամից ավելի էլեկտրաօգտագործումից զրկմամբ	1	-	-	-	-
վթարներ բնակչության խմելու ջրի մատակարարման համակարգերում	2	-	191	-	191
հրդեհ (պայթյուն) բնակելի շենքերում և շինություններում	477	14329	25	7	18
հրդեհ ենթակայաններում	10	2	-	-	-
վթարներ արտադրական օբյեկտներում	1	-	-	-	-
այլ վթարային իրավիճակներ, որոնք ուղեկցվում են ճառագայթման աղբյուրների, պայթուցիկ սարքերի և այլնի հայտնաբերումով	19	-	-	-	-
տեխնածին բնույթի դժբախտ պատահարներ	73	-	91	62	29
այլ վթարներ (աղետներ) ավտոճանապարհներին	820	-	1018	188	830

Շրջակա միջավայրը և բնական պաշարները 2003թ.


	Գրանցված դեպքերի քանակը, միավոր	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ		
			ընդամենը	նրանցից	
				գոհվել են	վիրավորվել են
հրդեհ (պայթյուն) արտադրական օբյեկտներում	18	105	-	-	-
տեխնածին այլ աղետներ	268	2165	86	5	81
այլ աղետներ	38	20	415	2	413

Տեխնածին աղետների քանակն ու տուժածների թվաքանակն ըստ մարզերի, 2003թ.*

	Գրանցված դեպքերի քանակը, ընդամենը	Պատճառված վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ		
			ընդամենը	նրանցից	
				գոհվել են	վիրավորվել են
ք.երևան	553	228	222	23	199
Արագածոտն	35	-	10	7	3
Արարատ	37	1497	9	3	6
Արմավիր	48	-	28	6	22
Գեղարքունիք	78	238	40	14	26
Լոռի	88	2507	14	6	8
Կոտայք	62	272	401	3	398
Շիրակ	164	12837	96	20	76
Սյունիք	41	153397	6	3	3
Վայոց ձոր	17	565	2	-	2
Տավուշ	32	48	2	1	1

* ԳԴ ԱՎԾ-ն չի տնօրինում ավտոճանապարհների տեղի ունեցած վթարների մասին տեղեկատվության ըստ մարզերի:

Գրանցված տարերային և տեխնածին աղետների քանակները, 1999-2003թթ., միավոր



2003թ. ընթացքում արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել և ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 1504 ղեկավար և մասնագետ:


Տարերային աղետների քանակը, միավոր

2003




Տարերային աղետների պատճառած վնասը, հազ. դրամ

2003




Տեխնածին աղետների քանակը, միավոր

2003



Տեխնաժին աղետների պատճառած վնասը, հազ. դրամ

2003



Մեթոդաբանական պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկատվություն

Արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

Տարերային աղետը վտանգավոր երկրաֆիզիկական, երկրաբանական, հիդրոլոգիական, մթնոլորտային և այլ երևույթների կամ գործընթացների այնպիսի ծավալային առաջացումներ են, որոնք բերում են աղետալի իրավիճակներ՝ արտահայտվելով բնակչության կենսաապահովման հանկարծակի խախտումով, նյութական արժեքների կորուստով և մարդկային զոհերով:

Վթարը տնտեսության օբյեկտում կամ տրանսպորտում տեղի ունեցող վտանգավոր պատահար է, որը հանգեցնում է արտադրական շենքերի, սարքավորումների, մեխանիզմների, տրանսպորտային միջոցների, հունքի ու պատրաստի արտադրանքի վնասման կամ ոչնչացման, ինչպես նաև արտադրական գործընթացի խախտման:

Աղետը խոշոր վթար է, որը հանգեցնում է մարդկային զոհերի, ինչպես նաև լրջորեն վնասում շրջակա միջավայրը:

Համաճարակը որոշակի տարածաշրջանի սահմաններում հարաճունորեն տարածվող վարակիչ հիվանդություն է, որը զգալիորեն գերազանցում է տվյալ սովորաբար գրանցվող հիվանդացության մակարդակը:

Էպիզոոտիան կենդանիների մեկ կամ շատ տեսակների մեծ քանակության մեջ վարակիչ հիվանդության միաժամանակյա տարածում է, որը զգալիորեն գերազանցում է տվյալ վայրին բնորոշ հիվանդացության սովորական մակարդակը:

Էպիֆիտոտիան բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի մեծ տարածքում որոշակի ժամանակամիջոցում վարակիչ հիվանդությունների տարածում է:

Տեխնածին աղետը տեխնոլոգիական գործընթացը խախտելու հետևանքով ծագող վտանգավոր պատահար է, որը հանգեցնում է մարդկանց առողջության համար սպառնալիքի և զոհերի, ինչպես նաև զգալի ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառում նյութական արժեքներին և շրջակա միջավայրին:

Չրդեհը այրման չվերահսկվող գործընթաց է, որն ուղեկցվում է արժեքների ոչնչացումով և մարդկանց կյանքի ու առողջության, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի համար վտանգ է ստեղծում:


Արտակարգ իրավիճակի աղբյուրը դա վտանգավոր բնական երևույթներն են կամ անտրոպոգեն դեպքերը՝ մարդկանց, կենդանիների ու բույսերի հիվանդությունների լայն տարածմամբ, ինչպես նաև ժամանակակից ախտահարման միջոցները, որոնց օգտագործման արդյունքում առաջանում է կամ կարող է առաջանալ արտակարգ իրավիճակ:

Ռադիոակտիվ աղտոտումը հողի մակերևույթին, մթնոլորտում, ջրում կամ սննդամթերքի, անասնակերի, սննդահումքի և տարբեր առարկաների վրա ռադիոակտիվ նյութերի տարածումն է կամ առկայությունն այնպիսի քանակով, որոնք գերազանցում են բնական միջավայրում դրանց պարունակության սովորական մակարդակը կամ էլ այն մակարդակը, որը սահմանված է ռադիացիոն անվտանգության չափաբանակներով ու ռադիոակտիվ նյութերի հետ աշխատելու կանոններով:

Երկրաշարժերը Հայաստանում

<p>Դեռ վաղ ժամանակներում Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերի մասին իրենց պատմագրություններում բազմիցս նշել են հայ և օտարազգի պատմիչները: Չնայած նրանք չափազանցել են դրանց ուժգնությունն ու հետևանքները, սակայն դրանց մի մասը բավականին ուժեղ են եղել: Տարբեր ժամանակներում երկրաշարժեր են արձանագրվել Արարատ լեռան շրջակայքում: Ըստ Եղեսիայի եպիսկոպոս Եփրեմի, ամենահզորը 341թ. էր, որը պատճառեց մեծ վնասներ և մարդկային զոհեր: Կ.Գանձակեցին վկայակոչում է 735թ. Վայքի շրջակայքում տեղի ունեցած հզոր երկրաշարժը, որի արդյունքում հիմնովին վերացել է Մոզան (Մոզն) քաղաքը, զոհերը կազմել են մոտ 10 հազար մարդ, առաջացել են հսկա ճեղքեր, ցամաքել են շատ աղբյուրներ:</p> <p>Դվինի 862թ. երկրաշարժի ժամանակ զոհվել է ավելի քան 12 հազար մարդ: 893թ. նույն տարածքում տեղի է ունեցել ավելի աղետաբերը և հզորը: Աղետը պատահել է գիշերը, զոհերն ավելի շատ են եղել, փլվել են քաղաքի պարիսպներն ու ամբարտակները, հաստահիմն շինությունները: Մարդկային մեծ զոհերի և ավերածությունների պատճառ է հանդիսացել նաև տասներորդ դարի սկզբների Սյունիքի երկրաշարժը:</p> <p>1138թ-ի Գանձակի երկրաշարժի ալիքները տարածվեցին մինչև Սյունիք: Հինգ տարի անց Սյունիքում եղել է ավելի ուժեղը՝ պատճառելով հսկայական վնասներ: Պատմությանը հայտնի է 1319թ. երկրաշարժը Արարատյան աշխարհում: Քարուքանդ են եղել բազմաթիվ բնակավայրեր, ամրոցներ ու եկեղեցիներ: Հիմնովին ավերվել է Անի մայրաքաղաքը:</p>	<p>Դարեր շարունակ աղետաբեր երկրաշարժերի էպիկենտրոն է եղել Երզնկա քաղաքը: Մինչև 1440թ. ժամանակ առ ժամանակ գործել է մերձավոր արևելքի միակ Նեմրուքի հրաբուխը (3330մ): Առ այժմ այն դեռևս ամբողջապես չի մարել: 600մ խորությամբ խառնարանից հաճախ լսվում են դողդոցներ, դուրս են ժայթքում ջրային գոլորշիներ, ծուխ, ծծմբային գազ, սակայն լավայի արտավիժումը բացակայում է:</p> <p>Տասնիններորդ դարի խոշորագույն երկրաշարժերից էր Մասիսի 1840թ. երկրաշարժը, որի ալիքները տարածվել են մինչև Արաքսի ձախ ավերը: Հիմնովին կործանվել է Արարատ լեռան լանջին գտնվող Ակոռի գյուղը:</p> <p>20-րդ դարը նույնպես հայտնի է մի շարք ուժեղ երկրաշարժերով: Դրանցից են 1926թ. Լենինականի, 1931թ. Ջանգեզուրի և Մեղրու, 1937թ. Երևանի, 1967թ. Քաջարանի երկրաշարժերը: Թերևս իր ուժգնությամբ և մասշտաբներով ամենաաղետալին 1988թ. Սպիտակի երկրաշարժն էր, որը բազմաթիվ ավերածությունների և ավելի քան 25 հազար մարդկային զոհերի պատճառ դարձավ: Հարյուր հազարավոր մարդիկ մնացել են անօթևան: 90-ական թվականներին արձանագրվել են 6-7 բալ (ըստ MSK-64-ի) ուժգնության մի շարք երկրաշարժեր՝ Մարտունու (Գեղարքունիքի մարզ, 1992թ.), Փամբակի (Գեղարքունիքի մարզ, 1996թ.), Նոյեմբերյանի (Տավուշի մարզ, 1997թ.) երկրաշարժերը:</p>
---	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ



Տարերայի աղետների դեպքերի քանակը և տուժածների թվաքանակը, 1999-2003թթ.

	1999	2000	2001	2002	2003
Գրանցված աղետների քանակը, միավոր	71	85	73	203	412
Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ	5	24	2	50	225
նրանցից					
զոհվել են	1	4	1	31	2
վիրավորվել են	4	20	1	19	163
ժամանակավորապես տարահանվել են	-	-	-	-	60

Տեխնածին աղետների դեպքերի քանակը և տուժածների թվաքանակը, 1999-2003թթ.

	1999	2000	2001	2002	2003
Գրանցված աղետների քանակը, միավոր	28	159	107	299	1977
Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ	66	319	149	278	1854
նրանցից					
զոհվել են	22	104	75	85	280
վիրավորվել են	44	141	74	193	1574
ժամանակավորապես տարահանվել են	-	74	-	-	-

Արտակարգ իրավիճակների դեպքերի քանակը և տուժածների թվաքանակը, 1999-2003թթ.

	1999	2000	2001	2002	2003
Գրանցված աղետների քանակը, միավոր	99	244	180	502	2389
Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ	71	343	151	328	2079
նրանցից					
զոհվել են	23	108	76	116	282
վիրավորվել են	48	161	75	212	1737
ժամանակավորապես տարահանվել են	-	74	-	-	60

ՍԵՅՍՄԻԿ ԳԼՈՒԲԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ-ՔԱՐՏԵԶ

